ժողովուրդների հնագոյն ժամանակագրութիւնները ասում են, որ մեր նախնիները՝ Հայոսը եւ Քարթլոսը, եղբայրներ էին: Անմոռանալի կը մնայ մեր հանդիպումն անցեալ տարի Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Նա այնտեղ արդէն բուժւում էր եւ իմանալով ԱՄՆ կատարած իմ այցին մասին՝ ցանկութիւն յայտնեց հանդիպելու ինձ: Մենք կլոր սեղան կազմակերպեցինք եւ ՄԱԿ-ի ներկայացուցիչների ներկայութեամբ զրուցեցինք այն հարցերի շուրջ, որոնք հետաքրքրում էին թ՛ Հայաստանին, թ՛ Վրաստանին: Մեր հանդիպումը կրկին փաստեց մեր հայեացքների միասնութիւնը:

Նորին Սրբութիւն Գարեգին Ա.Կաթողիկոս արժանաւոր յաջորդն էր մեծ կաթողիկոսներ Գէորգ Զ-ի, Վազգէն Ա-ի եւ այլոց: Նորին Սրբութիւն Գարեգին Ա. Կաթողիկոսի գործերն ու սխրանքները արժանաւորապէս կը գնահատուեն հայ ժողովրդի կողմից եւ բոլոր նրանց, ովքեր անձամբ ճանաչում էին իրեն:

Մենք կրկին անգամ բերում ենք մեր անկեղծ ցաւակցութիւնները ողջ հայ ժողովրդին:

Մենք վեր ենք առաքում մեր աղօթքները, որպէս զի Տէրը հանգստութիւն պարգեւի նրա հոգուն՝ այնտեղ, որտեղ գտնւում են Հայ Առաքելական Եկեղեցու մեծ եւ փառապանծ Հայրապետները:

# ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

**Վանական մը, իր հեզահամբոյր բարեպաշտութեամբ, կարճ ժամանակի մէջ նուաճեց հոգեւոր իշխանութեան բոլոր աստիճանները եւ եղաւ թեմական առաջնորդ նահանգի մը:**

**Ուրիշ բարեպաշտ վանական մը, նկատելով իր միաբանակցին այս արագասլաց վերելքը եւ ամէն աստիճանի տուչութենէ ետք կրած նկարագրի փոփոխութիւնը, գրեց հետեւեալ երկտողը, այսպէս սկսելով.**

**- Հոգեւոր եղբօրս Տ. Գարեգինին, բոցավառ սարկաւագին, ջերմեռանդ աբեղային, երախտամոռաց վարդապետին, անտրամադիր եպիսկոպոսին եւ սառնարիւն արքեպիսկոպոսին եւ շահադէտ առաջնորդին:**

«Մանրավէպեր»
էջ 68

ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՑ. ՏԻՒԼԿԷՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@